Աշխատանքի ծածկագիր 0270

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ.Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 15-րդ, 20-րդ, 26-րդ, 27-րդ:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 15

Բողոքաբերի փաստարկը հիմնավոր չէ, քանի որ հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 86-րդ և 203-րդ հոդվածների պահանջներից: Հարցի ձևակերպումից ակնհայտ է, որ խոսքը չի վերաբերում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությանը, որոնք կարող են նշանակվել դատարանի նախաձեռնությամբ:

Հարց 20

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում, ճիշտ պատասխան է նաև դ/ կետում սահմանված պատասխանը այն հիմքով, որ հակառակ պարագայում կխախտվի իրավական որոշակիությունը և կստացվի, որ օտարերկրյա

անձինք չեն կարող վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերել ՔԴՕ-ով սահմանված ժամկետներում: Առավել ևս, օրենսդիրը վերաքննիչ և բողոք բերելու առավել երկար ժամկետները պայմանավորել է միջազգային պայմանագրերով սահմանված դրույթներով: Այսինքն, օտարերկրյա անձինք կարող են վճռաբեկ և վերաքննիչ բողոք բերել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:

Հարց 26

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 263-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումներից: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 27

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բացառվում է հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 0270 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 20-րդ, 27-րդ հարցերի պատասխանները գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ